ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատ համայնք
0236- 6-22-36, 093-407-713 hhovtashat@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունվարի 2017 թվականի N 6-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատի համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 26-ի թիվ 2 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳԸ

1. ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀՈՎՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ և ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ
3. ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ և ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1.Ալեքսանյան Արզուման
2.Բաղալյան Նամեստ
3.Մարտիրոսյան Մուրադ
4.Եգորյան Գագիկ
5.Առաքելյան Հայկ
6.Հովհաննիսյան Գոռ
7.Հովհաննիսյան Հայկ
8.Մխիթարյան Քերոբ
9. Ասատրյան Արման

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատ համայնք
0236- 6-22-36, 093-407-713 hhovtashat@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

26 հունվարի 2017 թվականի № 7-Ն

ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 18 կետի և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների , <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատ համայնքում 2017թ-ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15 000 դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 դրամ.

- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ.

-1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ.

-3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 դրամ:

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ 5000 դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ 200000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 60000 դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 50000 դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000 դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 100000 դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000 դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ.

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 100000 դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝ 50000 դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 100000 դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 250000 դրամ.

դ. խաղատների համար՝ 500000 դրամ.

ե. շահումով խաղերի համար՝ 250000 դրամ.

զ. վիճակախաղերի համար՝ 100000 դրամ.

10) համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 24000 դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 40000 դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 17000 դրամ.

11) ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով:

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 100000 դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10000 դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 500000 դրամ:

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 դրամ.

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 դրամ.

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7000000 դրամ.

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 դրամ:

2. Հաստատել Հովտաշատ համայնքում 2017թ-ի համար սահմանված հետևյալ տեղական վճարների տեսակները և դրույքաչափերը.

1). Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարություն փաստագրելու համար , մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման համար վճար սահմանել 10 000դրամ

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 10 000դրամ

3) Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում, անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար, մատուցման ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5 000դրամ

4). Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 3 000դրամ

5) Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 7000դրամ

6)համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար 500 դրամ փոխհատուցման վճար.

7).Համայնքի տարածքում աղբահանության վճարը սահմանվում է՝

կենցաղային աղբի համար մատուցված ծառայությունների դիմաց յուրաքանչյուր բնակչի համար ամսական 80 դրամ

ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար 4000 դրամ, կամ

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար 10 000 դրամ:

Սույն որոշման 1-ին կետի դրույքաչափերին կիրառել 0.5 գործակից:

3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 16 նոյեմբերի 2016 թվականի № 38-Ն որոշումը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1.Ալեքսանյան Արզուման կողմ

2.Բաղալյան Նամեստ

3.Մարտիրոսյան Մուրադ կողմ

4.Եզորյան Գագիկ կողմ

5.Առաքելյան Հայկ կողմ

6.Հովհաննիսյան Գոռ կողմ

7.Հովհաննիսյան Հայկ կողմ

8.Մխիթարյան Քերոբ կողմ

9. Ասատրյան Արման կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատ համայնք
0236- 6-22-36, 093-407-713 hhovtashat@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

26 հունվարի 2017 թվականի № 8-Ա

ՀՈՎՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ և ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

ՂԵԿԱՎԱՐՎԵԼՈՎ <<ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 16 ՀՈԴՎԱԾԻ 29-ՐԴ ԿԵՏԻ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՎ

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել համայնքապետարանի հաշվեկշռում գտնվող հիմնական միջոցների և գույքերի ցուցակները՝ համաձայն հավելվածի

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Ալեքսանյան Արզուման կողմ
2. Բաղալյան Նամեստ կողմ
3. Մարտիրոսյան Մուրադ կողմ
4. Եզորյան Գագիկ կողմ
5. Առաքելյան Հայկ կողմ
6. Հովհաննիսյան Գոռ կողմ
7. Հովհաննիսյան Հայկ կողմ
8. Մխիթարյան Քերոբ կողմ
9. Ասատրյան Արման կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ 03801127

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատ համայնք
0236- 6-22-36, 093-407-713 hhovtashat@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

26 հունվարի 2017 թվականի № 9-Ն

ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ և ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 24.02.2011թ№164-ն որոշումով հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի պահանջները՝

Ավագանին որոշեց՝

Հաստատել Հովտաշատ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նոր կազմը՝

1. Հովհաննիսյան Յուրա հանձնաժողովի նախագահ՝ /համայնքի ղեկավարի տեղակալ/
2. Հովհաննիսյան Լևա հանձնաժողովի քարտուղար՝ /աշխատակազմի քարտուղար/
3. Մանուկյան Արմենուհի հանձնաժողովի անդամ /բուժքույր/՝
4. Փանոսյան Արայիկ հանձնաժողովի անդամ / մշակույթի տան տնօրեն /
5. Մխիթարյան Քեռոբ հանձնաժողովի անդամ /ավագանու անդամ /
6. Բալույանց Էռնեստ հանձնաժողովի անդամ՝ /բժիշկ/
7. . Շողիկ Նիկողոսյան հանձնաժողովի անդամ՝ /մանկապարտեզի դաստիարակ/

Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 09.03.2013թ-ի №6-Ն որոշումը

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Ալեքսանյան Արզուման կողմ
2. Բաղալյան Նամեստ
3. Մարտիրոսյան Մուրադ կողմ
4. Եգորյան Գագիկ կողմ
5. Առաքելյան Հայկ կողմ
6. Հովհաննիսյան Գոռ կողմ
7. Հովհաննիսյան Հայկ կողմ
8. Մխիթարյան Քերոբ կողմ
9. Ասատրյան Արման կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատ համայնք
0236- 6-22-36, 093-407-713 hhovtashat@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

26 հունվարի 2017 թվականի № 10-Ն

ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով.

Համայնքի ավագանին Որոշում է

Համայնքային սեփականություն հանդիսացող էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների ներքոհիշյալ հողերը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը:

1. 0.0225 հա , կադաստրային ծածկագիր / 03-054-0239-0017/
2. 0.0225 հա , կադաստրային ծածկագիր/03-054-0239-0016/
3. 0.0225 հա , կադաստրային ծածկագիր/03-054-0228-0008/
4. 0.0225 հա , կադաստրային ծածկագիր /03-054-0239-0018/
5. 0.0225 հա , կադաստրային ծածկագիր /03-054-0239-0015/
6. 0.0225 հա , կադաստրային ծածկագիր /03-054-0219-0007/
7. 0.0225 հա , կադաստրային ծածկագիր /03-054-0220-0016/
8. 0.01077 հա , կադաստրային ծածկագիր /03-054-0731-0032/
9. 0.0225 հա , կադաստրային ծածկագիր /03-054-0232-0022/
10. 0.0225հա , կադաստրային ծածկագիր /03-054-0220-0017/

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Ալեքսանյան Արզուման Կողմ
2. Բաղալյան Նամեստ
3. Մարտիրոսյան Մուրադ Կողմ
4. Եգորյան Գագիկ Կողմ
5. Առաքելյան Հայկ Կողմ
6. Հովհաննիսյան Գոռ Կողմ
7. Հովհաննիսյան Հայկ Կողմ
8. Մխիթարյան Քերոբ Կողմ
9. Ասատրյան Արման Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՎԱԳԱՆԻ *03801127*

Հավելված

Հովտաշատ համայնքի ավագանու

26 հունվարի 2017թ. որոշում N 8-Ա

Առկա հիմնական միջոցների և գույքերի ցուցակ

Համայնքապետարան

N	Անվանումը	քանակը	Արժեքը / դրամ/
1	Գյուղապետարանի շենք	1	636521
2	Ակումբի շենք	1	863500
3	Մանկապարտեզի հին շենք	1	1401200
4	Գյուղի գազատար	1	35903884
5	Ցերեկային լուսավորություն	1	14090800
6	Մինի ֆուտբոլի դաշտ	1	25105000
7	Վազ 21-099	1	728457
8	Ավտոմեքենա RENAULT DUSTER	1	8500000
9	Գազ-53 բեռնատար ավտոմեքենա	1	5921
10	MMZ-555 բեռնատար ավտոմեքենա	1	6174
11	T-54Bտրակտոր	1	14592
12	Համակարգիչ, մոնիիտոր,	2	140363
13	Պրինտեր	2	79800
14	Հեռուստացույց	1	92042
15	Փափուկ կահույքի կոմպլեկտ, Դիվան	1	60768
16	Տնօրենի սեղան	1	64089
17	Խորհրդատվության սեղան	1	44626
18	սեղան փոքր		14719
19	Հուշարձան	1	1100000
20	Երկաթյա պահարան	1	14100
21	Կրակմարիչ	1	15000
22	Օդորակիչ /Samsung AQ12UGF /	1	190938
23	Հեռուստացույց /Samsung UE40EH5000/	1	209457
24	համակարգչի սեղան դարակներով	4	218072
25	Գրասեղան	3	92000
26	Պահարան փակ դռներով	5	272590
27	Գրասենյակային բազկաթոռ	4	87232
28	Սերվեր Fujisu PY TX1310M1/LFF/STANDART PSU/, մոնիիտոր	1	411033
29	Անխափան UU Power com BNT -600A	1	19866
30	Անխափան UU Power com BNT -800AP	1	31794
31	Տեսախցիկ հսկողական DS-2CD2T52-I5	3	315000
32	Տեսախցիկ հսկողական DS-2CD2420F-I	2	100000
33	Տեսախցիկ հսկողական DS-2CD2020F-I	3	210000
34	Տեսաձայնագրիչ DS-7608NI-E2	1	110000
35	Կոշտ սկավառակ Seagate ST2000VX003 2 TB	1	60000
36	Ցանցային բաժանարար D-Link	2	40000
37	Սնուցման սարք 12V	1	18000

Մշակույթի տուն

N	Անվանումը	քանակը	Արժեքը / դրամ/
1	Դաշնամուր /Սևան/	1	4225
2	Ակարդիոն	1	1601
3	Ուսիլիտել	1	1786
4	Ուսիլիտել տակտ	1	14162
5	Ուսիլիտել YAZ	1	2941
6	Ֆոտո ապարատ /զենիթ/	1	1355
7	Դիսպերստոր-60M	1	1508
8	Մագնիտաֆոն	1	2941
9	ֆոտոօրբիտոր21M	1	1160
10	Իոնիկա/ներ/	1	4010
11	ուդառնիկ կոմպլեկտ	1	6682
12	պեդալ կիթառի	1	268
13	էլեկտ.ուսիլիտել	1	2086
14	հակագազ	1	10

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ